զօրութեան Արքունի հրովարտակաց և հաստատուն գրոց, և մատուցին զայնս առ դատաւորն ընթեռնուլ, որոց բովանդակութիւնն է. 'ի ժամանակի խռովութեան Ցունաց և Լատինաց սակս բանալեաց եկեղեցւոյն Բեթհեղէմի և այլ իրաց, եւ հրովարտակ յԱրքունուստ յանձնել զամենայն ինչ Ցունաց, որք միանգամ գրեալ էին 'ի հրովարտակին. բայց յայնժամ չեղեւ ինչ խնդիր և կամ վէճ ինչ յաղագս Լատին վանաց, զի բաց 'ի նոցանէ, ոչ ոք տիրեալ էր այնմ, և այս խնդիր այսպէս վախճան էառ։

Դարձեալ ասացին Ցոյնք. յորժամ եհաս հրովարտակն յԵրուսաղէմ, յորում պատուիրէր Արքայ յանձնել Ցունաց զԳերեզմանն Քրիստոսի, եւ բառնալ զնուագարանն՝ զոր եդեալ էին Լատինք յանդիման Գերեզմանին Քրիստոսի, և ոչ բարձին 'ի տաճարէն Ս. Ցարութեան։ Առ այս ետուն պատասխանի Լատինք, ըստ հրամանի Արքային՝ բարձին զայն անտի Լատինք, և եդին 'ի դաւիթ եկեղեցւոյն իւրեանց։ Առարկեցին Ցոյնք դարձեալ զայլ ինն խնդիր եւ սահն. հրովարտակն այն գրեալ 'ի Թուականի իւրում, իսկ այս նոր հրովարտակին զի՞նչ ունիք ասել, որ գրեալ է 'ի ١٥ ձէմաղիլ էվվէլ ամսոյ՝ ١٠٩٩ (1688). Թէ մի գոցին Լատինք յԵրուսաղէմ աւելի քան զերեսուն և երիս անձինս։ Մատոյց յայնժամ փոխանորդն Լատինաց զդաշնագիրն, յորոյ վերայ հիմնեալ էր Կայսերական հրովարտակն, յանուն Գաղղիոյ Թագաւորին, 'ի ١٠ Սէպէր ամսոյ՝ ١٠٨٤ (1673)։ Ուր ասէ, մի ոք հակառակեսցի Լատին կղերաց բնակելոց յԵրուսաղէմ, եւ ուխտաւորաց նոցին, եւ մի ոք խափանեսցէ զսովորութիւնս նոցա, զի յառաջագոյն ամենայն ինչ 'ի ձեռս նոցա էր, Թէ 'ի մէջ քաղաքին եւ Թէ արտաքոյ նորին, և չէր ոք որ հակառակ կայր նոցա, եւ ո՛չ ոք համարձակէր ելանել 'ի քննութիւն եւ ոչ 'ի գիր արձանացուցանել. նոյնպէս տաճարն Սուրբ Ցարութեան եւ ամենայն ուխտատեղիքն, եւ չէր ոք որ ընդդէմ դառնայր եւ կամ նեղէր զնոսա։ Ապա յաւելու, Լատինք որ բնակեալ են յԵրուսաղէմ, մնասցեն ըստ առաջին եղանակի 'ի բնակութիւնս և յուխտատեղիս իւրեանց, և եթէ դատաստան ինչ պատահեսցի, և ոչ լուծցի յԵրուսաղէմ, դատեսցին 'ի Կոստանդինուպոլիս։ Եւ եկեղեցա-